ԼՈՒՍԻՆԵ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Պատմական գիտելիքների ձևավորման և ուսանողության ուսուցման գործում կարևոր դեր են խաղում պատմական աղբյուրները՝ փաստաթղթերը, գրքերը, տեսողական առարկաները և այլն: Դասավանդման ժամանակ պատմական աղբյուրների օգտագործումն առաջին հերթին հնարավորություն է տալիս նյութի շարադրանքը դարձնել պատկերավոր, երկրորդ՝ օգնում է ուսանողներին անցյալի կերպարների միջոցով զգալ դարաշրջանի ոգին, շունչը, միջավայրը և երրորդ՝ սովորեցնում է մտածել, վերլուծել և քննարկել ստացած տեղեկատվությունը: Արդյունքում, ներկայացվող նյութի կառուցվածքի մեջ ճիշտ ձևով ներգրավված աղբյուրները հետևությունները դարձնում են ավելի հիմնավոր և սովորողների մոտ ձևավորում են պատմական փաստը ինքնուրույն վերլուծելու կարողություններ:

Փաստաթղթերի հետ կատարվող աշխատանքների նկատմամբ նոր մոտեցումները առանձնապես կարևորվում են ներկայումս, քանի որ հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները հարկադրում են պատմական շատ ու շատ իրադարձությունների նկատմամբ նոր մոտեցումներ ցուցաբերել, առավելագույնս հասնել ճշմարտությանը: Միայն պատմական աղբյուրների նկատմամբ քննադատական մոտեցմամբ է հնարավոր ճիշտ ընկալել այդ իրադարձությունները, խուսափել ապակողմնորոշումից և սխալ դատողություններից: Այս պատճառով էլ աղբյուրագիտական հետազոտություններ կատարելու հմտություններին և կարողություններին տիրապետելը դառնում է պատմության դասավանդման պարտադիր պահանջներից մեկը:

Պատմական գիտության ժամանակակից վիճակը բնութագրվում է մի քանի բնորոշ գծերով: Պատմության ուսումնասիրման դասական մոդելի պահպանմանը զուգահեռ, հետազոտական և մեթոդաբանական մոտեցումներում նկատվում է միակարծիքային դրսևորումներից անցումը բազմակարծիքային սկզբունքների: Դա արտահայտվում է այն գիտակցությամբ, որ գիտական գործունեությունը հիմնված է մեթոդաբանական կողմնորոշման ընտրության վրա: Պատմության բացահայտման ձգտումը ուղեկցվում է անցյալի սոցիալ-մշակութային արժեքների մեթոդաբանական բացահայտման փորձով: Դրանով է

պայմանավորված քաղաքակրթությունների պատմության նկատմամբ աճող հետաքրքրությունը:

«Ռուսաստանի պատմություն» առարկայի դասավանդման հիմնական առանձնահատկությունները քննարկելու համար պետք է հաշվի առնել ուսուցման ժամանակակից մեթոդները և մոտեցումները: Եթե XX դարը տեսական մոտեցումների դարաշրջան էր, ապա շատ պատմաբանների կարծիքով XXI դարը կդառնա մեթոդաբանության դարաշրջան: Դրանով է պայմանավորված այն փաստը, որ արդի փուլում պատմության դասավանդման ժամանակ նախապատվությունը տրվում է այն մեթոդներին, որոնք ուղղված են ուսանողների ճանաչողական գործունեության ակտիվացմանը: Այս սկզբունքով էլ պետք է ձևակերպել բուհում Ռուսաստանի պատմության ուսուցման նպատակները: Ուսանողն, իհարկե, պետք է տիրապետի փաստական նյութի և կարողանա նկարագրել պատմական իրադարձությունները, սակայն, այն չպետք է գերակշռող տեղ զբաղեցնի դասավանդման ընթացքում: Ուսանողն առաջին հերթին պետք է կարողանա ներկայացնել պատմական իրադարձությունների վերլուծությունը՝ դրա համար օգտագործելով իր ստացած տեսական գիտելիքների հնարավորությունները:

Պատմության դասավանդումը նպատակ է հետապնդում պատմական երևույթների նկատմամբ ուսանողների մոտ ձևավորել տեսական պատկերացումներ և հավասարակշռված մոտեցումներ տարբեր քաղաքակրթությունների նկատմամբ:

«Ռուսաստանի պատմության» առարկայի ուսումնասիրությունը հայկական բուհում պետք է իրականացվի ժամանակակից առարկայական և մեթոդական նվաճումների հիման վրա: Օրինակ՝ ռուսական պետականության կազմավորման թեմայի դասավանդման ընթացքում անհրաժեշտ է ուսանողների ուշադրությունը կենտրոնացնել այն գործոնների վրա, որոնք որոշում են հասարակական և քաղաքական զարգացման ընթացքը. դրանք են՝ աշխարհագրական և բնակլիմայական պայմանները, բնակչության էթնիկական բարդ կառուցվածքը: Թեմայի դասավանդման ընթացքում անհրաժեշտ է վերլուծել նշված գործոնների դերը ռուս ժողովրդի ազգային նկարագրի ձևավորման հարցում:

Նշված նպատակների հաջող իրականացման համար դասախոսը պետք է վարպետորեն տիրապետի ուսուցման ժամանակակից ակտիվ մեթոդներին, ուսման ընթացքում կիրառի արտասահմանյան և հայրենական պատմագրություն առարկայական և մեթոդական նվաճումները: Հաշվի առնելով բուհի և ուսանողների պահանջները, դասախոսը պետք է որոշի ոչ միայն գիտելիքների ծավալը, այլ նաև դրանց բովանդակության յուրացման մակարդակը: Սովորաբար առանձնացվում են այդպիսի երեք մակարդակ՝ ճանաչողական, վերարտադրողական,, ստեղծագործական:

Ճանաչողական մակարդակը ենթադրում է Ռուսաստանի պատմության վերաբերյալ ընդհանուր պատկերացումների ձևավորում: Վերարտադրողական մակարդակը ենթադրում է ստացած գիտելիքների վերարտադրման կարողություն: Ստեղծագործական մակարդակը պահանջում է պատմական իրադարձությունների և անձերի ինքնուրույն հետազոտություն և վերլուծություն:

Դասախոսը պետք է որոշի, թե դասախոսության որ մասում է անհրաժեշտ նախապատվությունը տալ փաստագրական նյութին, տեսական գիտելիքներին կամ էլ պատմական նյութի սովորական շարադրանքին:

«Ռուսաստանի պատմության» դասընթացի բովանդակության ընտրությունը առաջին հերթին կախված է պետական չափորոշիչներից, բուհի մասնագիտական ուղղվածությունից, մասամբ նաև դասախոսի մասնագիտական որակներից և լսարանի պատրաստվածության աստիճանից: Որոշելով ուսումնասիրության առարկայական կողմը, պատմաբանն այնուհետև սկսում է պատմական աղբյուրների ուսումնասիրությունը՝ հենվելով վերլուծության և համադրության տեսական մեթոդների վրա: Պատմության ուսումնասիրությունը պետք է համապատասխանի գիտականության, օբյեկտիվության և պատմականության սկզբունքներին: Պատմական հետազոտության մեթոդների ընտրությունը չպետք է կախված լինի սուբյեկտիվ, անձնական նախասիրություններից, քանի որ նման մոտեցումն անդրադառնում է հետազոտության որակի վրա. «ժամանակակից պատմաբանը չպետք է աղավաղի պատմական պրոցեսը և պատմական ապացույցները չպետք է ծառայեցնի անձնական կամ ծառայողական շահերին»:[1]

Պատմաբանի ուսումնասիրությունների անբաժանելի մասն են կազմում նաև հատուկ-հետազոտական մեթոդները: Ժամանակակից գիտական աշխատություններում հաճախ օգտագործվում են առարկայական, գենետիկական և պատմա-համեմատական մեթոդները: Առարկայական մեթոդը զարգացում ապրեց պատմական աղբյուրների քանակական ածին զուգահեռ: Այս մեթոդը հատկապես մեծ կարևորություն է ստանում հնագիտական մշակութային արժեքների հետազոտման ժամանակ: Համակարգչային տեխնիկայի միջոցով հնարավոր է դառնում որոշել նյութի տեսակը, ինչն էլ բացահայտում է մեթոդի արժեքավորությունը: Համակարգիչների օգնությամբ տարբեր համակարգերի տվյալների օգտագործումն անհրաժեշտ է պատմաբանների գործունեության բոլոր ասպարեզներում: Օրինակ՝ հին ռուսական իրավական համակարգի ձևավորման թեմայի դասավանդումը կարելի է անցկացնել գենետիկական և պատմահամեմատական մեթոդների հիման վրա: Դասախոսը պետք է համեմատական զուգահեռներ անցկացնի Յարոսլավ Իմաստունի «Ռուսկայա Պրավդայի», Մխիթար Գոշի «Դատաստանագրքի», բյուզանդական, սաքսոնա-

[1] Кислицын С. История России в вопросах и ответах, Ростов-на-Дону, 2001, с. 21

կան, բավարական իրավական փաստաթղթերի միջև: Այս դասընթացը առավել ամբողջական դարձնելու համար պետք է այն լրացնել համակարգչային նյութերով: Ըստ ռուս պատմաբան Պլատոնովի «գենետիկական և պատմա-համեմատական մեթոդներն ուղղված են տարբեր ժողովուրդների մոտ միանման պատմական երևույթների հայտնաբերմանը և հետազոտմանը: Այդ ուսումնասիրություններն անհրաժեշտ է կատարել պատմության հետազոտման քաղաքակիրթ մոտեցումների շրջանակներում: Նոր և նորագույն շրջաններում շատ ընդհանրական երևույթներ են դրսևորվում հեղափոխական պրոցեսների, քաղաքական կուսակցությունների և շարժումների ձևավորման ու զարգացման, գաղափարախոսությունների, քաղաքական համակարգերի, ռեժիմների համեմատության ժամանակ»:[2]

Պատմագիտական ուսումնասիրությունն անհնար է պատկերացնել առանց պատմական աղբյուրների: Դրանց օգտագործման մեթոդիկան ուսումնասիրվում է աղբյուրագիտության կողմից: Հայտնի աղբյուրագետ պրոֆ. Ա. Պ. Պրոնշտեյնը առանձնացրել է պատմական աղբյուրների ուսումնասիրության երեք աստիճան. առաջին աստիճանում առանձնացվում է այն ամբողջ ինֆորմացիան, որը պարունակում է տվյալ աղբյուրը: Երկրորդ աստիճանում աղբյուրներից վերցված տվյալների հիման վրա վերականգնվում է պատմական իրադարձությունների իրական պատկերը: Ուսումնասիրության երրորդ աստիճանում կառուցվում է պատմական հիպոթեզ, տեսություն կամ վարկած: Վերջին աստիճանն ամենապատասխանատուն է, քանի որ այն տալիս է պատմաբանի գործունեության գնահատականը: Նշված աստիճաններից յուրաքանչյուրը բխում է պատմական գիտության հետազոտման մեթոդներից: «Պատմագիտական հետազոտության մեթոդիկան կախված է պատմաբանի օրինաչափ, ճշգրիտ աշխատանքի անհրաժեշտությունից և ժամանակագրական շրջանակներից: Իր ստեղծագործական գործունեության ընթացքում պատմաբանը վերլուծության է ենթարկում ինֆորմացիան և համադրում՝ ստացված հետևությունները հիմնավորելով պատմականության սկզբունքով»:[3]

«Ռուսաստանի պատմության» աղբյուրագիտության հիմքն են կազմում տարեգրությունները, որոնց ուսումնասիրության արդյունքում մենք փաստացի տվյալներ ենք իմանում Հին Ռուսիայի պատմության վերաբերյալ: Օրինակ՝ տարեգրային նյութի ուսումնասիրությունը անհրաժեշտ է սկսել Նեստորի «Անցած տարիների պատմությունից»: Այստեղ անհրաժեշտ է օգտվել պրոֆ. Ա.Պ.Պրոնշտեյնի վերը ներկայացված պատմական աղբյուրների ուսումնասիրության երեք աստիճաններից:

---

[2] Платонов О., Русская цивилизация, М., 1995, с. 31.
[3] Кислицын С., Указ. соч., с. 21.

Աղբյուրագիտության մեջ ընդունված է Ռուսաստանի պատմությունը բաժանել պատմական երեք ժամանակաշրջանի, որոնցից յուրաքանչյուրի համար բնորոշ են իրենց գրավոր աղբյուրների տեսակները. 1/ Հին Ռուսական շրջան (XI-XVIIդդ.), 2/ Ռուսական կայսրության շրջան (XVIII-XX դարի սկիզբ), 3/ Խորհրդային շրջան (XX դար սկզբից –մինչև XX դարի 90-ական թթ.):[4]

Համաշխարհային մշակույթի պատմության բացառիկ երևույթներ են ռուսական տարեգրությունները: Դրանք հանդիսանում են միջնադարյան պատմական գրականության նմուշներ են և ներկայանում են որպես միջնադարյան ժամանակագրությունների տարատեսակներից մեկը:

Տարեգրությունները գոյատևեցին մինչև XVIII դարի սկզբները, մինչ այն ժամանակ, երբ դրանց փոխարինելու եկան պատմական և գրական ստեղծագործությունների այլ տեսակներ: Այս ժամանակաշրջանում պատմության աղբյուրների համակարգում տեղի ունեցան զգալի փոփոխություններ: Առանձնացան օրենսդրական աղբյուրները՝ հրովարտակները, հրամանագրերը և այլ իրավական փաստաթղթեր: Նորություն էր նաև դրանց հրատարակելու համակարգի ձևավորումը: Առաջ եկան իրավական փաստաթղթերի նոր տարատեսակներ, որոնք վավերացնում էին նվիրատվության, առք ու վաճառքի և այլ իրավահարաբերություններ: 1861թ. ճորտատիրական կարգի վերացումը հանգեցրեց կալվածագրերի և փրկավճարների վկայականների ի հայտ գալուն: Փոփոխությունների ենթարկվեցին նաև պետական հաստատությունների փաստաթղթերը: Առաջ եկան վիճակագրական բնույթի փաստաթղթեր. բնակչության մարդահամարի նյութերը, եկեղեցական գրանցումների գրքերը, գործարանների և ֆաբրիկաների վերաբերյալ տեղեկագրերը և այլն: Պատմական աղբյուրների կարևոր տեսակներ են դառնում հրապարակախոսական բնույթի աշխատությունները, որոնք արտահայտում էին սոցիալական որոշակի խմբի վերաբերմունքը հասարակական հնչողություն ունեցող հիմնախնդիրների վերաբերյալ, հուշագրությունները, պարբերական մամուլը: Աղբյուրների մեծ մասը, հատկապես պաշտոնական բնույթի փաստաթղթերը, անմիջապես հրատարակվում էին տեղեկագրերում:

Հաջորդ շրջանում, որը երբեմն պայմանականորեն անվանվում է «նորագույն ժամանակաշրջան» կամ «խորհրդային և հետխորհրդային շրջան» պատմական աղբյուրների համակարգում փոփոխություններն առավելապես տեղի են ունենում նախկինում ձևավորված տիպերի զարգացման ձևով: Վճռական դեր են սկսում կատարել քաղաքական կուսակցությունների և հասարակական շարժումների փաստաթղթերը՝ համագումարների և պլենում-

---

[4] Берельковский И. В., Павлов А. С., История: Методика преподавания, М., 2001, с. 266-268.

ների սղագրությունները, կուսակցական մարմինների որոշումները: Աճում է հանրաքվեների և հասարակական կարծիքի հարցման արդյունքների տեղեկատվական նշանակությունը, կարևոր նշանակություն են ձեռք բերում պետական հաստատություններին ուղղված քաղաքացիների դիմումներն ու նամակները, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցներում տպագրված հարցազրույցները: Ընդլայնվում է նաև ոչ ավանդական պատմական աղբյուրների օգտագործման շրջանակը (կինո, լուսանկարներ, տեսանյութեր, ինտերնետ և այլն):

Պատմական աղբյուրների տեսակների ընդհանուր բնութագիրը և Ռուսաստանի պատմության տարբեր շրջաններում դրանց բնութագիրը տրված է «Աղբյուրագիտության» նոր հրատարակությունում, որտեղ ներկայացված է նաև հիմնական գրականության ցանկը:

Ժամանակակից կրթական համակարգը գիտական հիմնավորումների և դաստիարակության ազդեցիկ մեթոդների կարիք է զգում: Չի կարելի ուսանողներին տրամադրել այնպիսի նյութ, որտեղ ուշադրությունը կենտրոնացված է միայն պատմության լուսավոր կամ մութ էջերի վրա: Անհրաժեշտ է հասնել պատմական երևույթների համընդհանուր ճանաչողությանը՝ հենվելով պատմագիտական ճշմարտության վրա: Պատմության նկատմամբ ժամանակակից մոտեցումների զուգակցումը ավանդական սոցիալ-դասակարգային մոտեցումների հետ, հնարավորություն է տալիս բազմակողմանիորեն բացահայտել ինչպես համաշխարհային, այնպես էլ ռուսական քաղաքակրթության զարգացումը: Պատմաբանը գիտական հետազոտության տարբերություն մեթոդների կիրառման ժամանակ պետք է պահպանի անկողմնակալություն:

Այսպիսով, յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր անցյալը, որի պատմական փորձը ինքնատիպ է և անկրկնելի: Ռուսաստանի պատմության ուսումնասիրության մեթոդաբանական հիմքում պետք է դրվի պետականության զարգացման գործընթացը, որի շրջանակներում տեղի է ունեցել տարբեր ժողովուրդների և մշակույթների համաձուլում: